Co-funded by the European Union

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և եվրոպական գործընկեր համալսարանների հետ մշակած «**ԵՄ - ԿԱՄՈՒՐՋ. Հայաստանում բարձրագույն կրթության ամրապնդում եվրոպական նախագծերի կառավարման համար» (EU Bridge: Strengthening Higher Education for European Project Management in Armenia)** նախագիծը (այսուհետ՝ **EU Bridge**) հավանության է արժանացել Եվրամիության կողմից և համաֆինանսավորում է ստացել ԵՄ Էրազմուս+ (ERASMUS plus) ծրագրի շրջանակում:

EU Bridge նախագիծը նպատակ ունի ամրապնդել Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը՝ բարձրացնելով բուհերի կարողությունները եվրոպական ֆինանսավորմամբ ծրագրերի կառավարման և դրանց մասնակցության ոլորտում: Այն նպաստելու է Հայաստանում եվրոպական ֆինանսավորմամբ ծրագրերի որակի բարձրացմանը, միջազգային համագործակցության խթանմանը, ծրագրերի կառավարման ոլորտի մասնագետների պատրաստմանն ու փորձի փոխանակմանը՝ ամրապնդելով հայկական համալսարանների դերը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում:

EU Bridge-ը արձագանքում է առկա մարտահրավերին՝ առաջարկելով համապարփակ կարողությունների զարգացման մոդել, որը ներառում է մասնագիտացված ուսումնական ծրագիր, Եվրոպական նախագծերի կառավարման

Պիլոտային ակադեմիա, սոցիալական նորարարության լաբորատորիա և մոդելավորման վրա հիմնված ուսուցման գործիքներ:

Ծրագրի ավարտին նախատեսվում է ունենալ՝

60 վերապատրաստված մասնագետ

10 սիմուլյացիոն ուսումնական աշխատաժողով

Ուսումնական մոդուլ՝ ներդրված մի քանի հայկական բուհում

100 ակտիվ օգտատեր թվային ուսուցման հարթակում

Մասնակից բուհերը և կազմակերպություններն են՝

Հայաստանից՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Եվրասիա միջազգային համալսարան, «ՀԿ կենտրոն քաղաքացիական հասարակության զարգացման» ՀԿ

Իսպանիայից՝ Մուրսիայի համալսարան (UNIVERSIDAD DE MURCIA) և «Էմպրեսաս քոն Վալորես» ՀԿ (EMPRESAS CON VALORES)

Իտալիայից՝ Տուշայի համալսարան (UNIVERSITA DEGLI STUDI DELLA TUSCIA)

Ծրագրի համակարգողն է **ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը** /www.isec.am /:

Նախագծի պաշտոնական բացման արարողությունը կկայանա 2026 թ. հունվարի 29-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում:

Ծրագրի տևողությունը 24 ամիս է:

———

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են բացառապես հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության պաշտոնական դիրքորոշումը: Եվրոպական միությունը և Եվրոպական կրթության և մշակույթի գործադիգործակալությունը պատասխանատվություն չեն կրում վերոնշյալի համար: